ՆԱԽԱԳԻԾ-Ա

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայական) Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի, 1-ին և 2-րդ հարկերի, ընդհանուր 245.23քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով տրամադրել «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 1-ին և 2-րդ հարկերի, ընդհանուր 245.23քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով տրամադրել «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող գույքը (0.498075հա հողամաս, 25809.96քմ շինություն) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայականի համաձայն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության գրության համաձայն «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությունը մշակութային ոլորտում իրականացվում է կրթական տարբեր ծրագրեր մանկապարտեզներից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում դպրոցականներին ներկա գտնվել համերգներին և ծանոթանալ դասական երաժշտության և աշխարհահռչակ կոմպոզիտորների ստեղծագործություններին: Միաժամանակ նշելով, որ կազմակերպության ծրագրերի թվաքանակի և մասշտաբների ընդլայնման, աշխատակիցների թվաքանակի ավելացման, ինչպես նաև իրականացվող ծրագրերի շրջանակում աշխատանքային քննարկումների և ֆոկուս-խմբային հանդիպումների կազմակերպման համար անհրաժեշտություն է առաջացել ունենալ աշխատանքային տարածք:

Ելնելով վերը շարադրվածից, ինչպես նաև ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ